ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ N 300 -Ա

«18» մարտի 2024 թվական գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՅԻՍՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 08-077-0054-0002 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆՐՈՒՄ ՆՈՐ ԱՌԱՋԱՑԱԾ 0,2 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՏՎԱԾԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ, 24-րդ, 28-րդ, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով և համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի, դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետի պահանջների որոշում եմ՝

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Մայիսյան բնակավայրի տարածքում գտնվող 08-077-0054-0002 կադաստրային ծածկագրով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, ընդերքի օգտագործման համար տրամադրված հողամասերի գործառնական նշանակության 0,2 հեկտար մակերեսով հատվածի գործառնական նշանակությունը փոխել գյուղատնտեսական արտադրական օբյեկտների:

2.Սույն որոշման 1-ին կետում նշված 0,2 հեկտար մակերեսով հողամասը հասցեավորել՝ «Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Ախուրյան համայնք, գյուղ Մայիսյան, Մայիսյան-Հովունի խճուղի, 4 հողամաս»:

3.Սույն որոշմամբ կատարված փոփոխությունները գրանցելու նպատակով, ներկայացնել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԶԱՎԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

«18» մարտի 2024 թվական
գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ N 301 -Ա

«18» մարտի 2024 թվական գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՏՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 08-032-0112-0064 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,0464 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, 59-րդ հոդվածի 1-ին մասի, 3-րդ կետի դրույթներով և համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի, դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետի և 39-րդ կետի պահանջների, որոշում եմ՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Գետք բնակավայրի տարածքում գտնվող, 08-032-0112-0064 կադաստրային ծածկագրով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության 0,0464 հեկտար մակերեսով հողամասը հասցեավորել՝ «Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Ախուրյան համայնք, գյուղ Գետք, 2-րդ փողոց, 43/4 հողամաս»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԶԱՎԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

«18» մարտի 2024 թվական
գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ N 302-Ա

«18» մարտի 2024 թվական գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՏՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 08-032-0112-0065 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,30849 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, 59-րդ հոդվածի 1-ին մասի, 3-րդ կետի դրույթներով և համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի, դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետի և 39-րդ կետի պահանջների, որոշում եմ՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Գետք բնակավայրի տարածքում գտնվող, 08-032-0112-0065 կադաստրային ծածկագրով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության 0,30849 հեկտար մակերեսով հողամասը հասցեավորել՝ «Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Ախուրյան համայնք, գյուղ Գետք, 2-րդ փողոց, 43/3 շինություն»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԶԱՎԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

«18» մարտի 2024 թվական
գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ N 303-Ա

«18» մարտի 2024 թվական գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԻՐԱԿ ԳՅՈՒՂԻ 4-ՐԴ ՓՈՂՈՑ 21 ՀԱՍՑԵԻ 08-089-0065-0009 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԵՆՔ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Հակոբ Վանիկի Գևորգյանը (ծնված 12/07/1974 թվական) դիմել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարին՝ բաժնային սեփականության իրավունքով (հիմք ժառանգության վկայագիր 604-20231207-84-7534144) իրեն ընտանիքին պատկանող Շիրակ գյուղի 4-րդ փողոց 21 հասցեի 08-089-0065-0009 կադաստրային ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,130483 հեկտար մակերեսով տնամերձ հողամասի վրա առկա, ինքնակամ համարվող բնակելի նշանակության շենք շինություններն օրինական ճանաչելու խնդրանքով:

Բաժնային սեփականության իրավունքով Հայկանուշ, Հակոբ, Մկրտիչ և Հայկ Գևորգյաններին պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Շիրակ գյուղի, 4-րդ փողոց, 21 հասցեի հողամասի վրա գտնվող ինքնակամ կառույց համարվող 75,67 քառակուսի մետր ներքին մակերեսով անասնաշենքը կառուցվել է 1991 թվականին (2001 թվականի մայիսի 15-ից առաջ), իսկ ինքնակամ կառուցված 230,26 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տունը, կիսանկուղները, ավտոտնակը մառանը և շվաքարանները 2020 թվականին: Ինքնակամ կառույցները կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք: Ինքնակամ կառույցները հաշվառված են Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեում թիվ 2024HFUQLS ծածկագրով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 6-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հունվարի 5-ի թիվ 14-Ն որոշման 2-րդ կետի, «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի թիվ 912-Ն որոշման 1-ին և 4-րդ կետերի դրույթներով, համաձայն նույն որոշման կարգի 8-րդ, 10-րդ, 11-րդ կետերի, 13-րդ կետի ա) ենթակետի և 22.1 կետի պահանջների, ինչպես նաև հաշվի առնելով «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածով սահմանված շինության տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցների (Գգ) սահմանված չափը՝ որը Շիրակ գյուղի (Շիրակի մարզ, 16-րդ գոտի) համար 0,0874 է, որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Շիրակ գյուղի 4-րդ փողոց, 21 հասցեի հողամասի վրա գտնվող ինքնակամ կառույց համարվող 1991 թվականին կառուցված 75,67 քառակուսի մետր ներքին մակերեսով անասնաշենքը ճանաչել օրինական առանց վճարների գանձման:
2. Նույն հողամասի վրա 2020 թվականին ինքնակամ կառուցված 230,26 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի տունը, կիսանկուղները, ավտոտնակը մառանը և շվաքարանները ճանաչել օրինական սահմանված վճարների դիմաց:
3. Սույն որոշման 2-րդ կետով օրինական ճանաչված բնակելի նշանակության շինությունների յուրաքանչյուր մեկ քառակուսի մետրի օրինականացման համար սահմանել 10000 դրամ և կիրառել շինության տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության 0,0874 գործակիցը:
4. Ընդամենը շինությունների օրինականացման համար հաշվարկված վճարը կազմում է 201247 (երկու հարյուր մեկ հազար երկու հարյուր քառասունյոթ) դրամ:
5. Սույն որոշման ուժի մեջ մտնելու օրվանից հաշված, 60 օրյա ժամկետում, օրինականացման համար սույն որոշման 4-րդ կետով սահմանված գումարը չվճարելու դեպքում՝ որոշումն համարվում է ուժը կորցրած:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անշարժ գույքի բաժնային սեփականատերերին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
7. Գույքային իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԶԱՎԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

«18» մարտի 2024 թվական
գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ N 304-Ա

«18» մարտի 2024 թվական գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի ԹԻՎ 814-Ա ԵՎ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 29-Ի ԹԻՎ 98-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթներով և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի 2024 թվականի մարտի 5-ի թիվ Կ-05032024-08-0176 որոշումը՝ որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի 2023 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ախուրյան գյուղի Ջրաշինարարների բանավան 12-րդ փողոց 4/12 հասցեի 08-007-0052-0025 կադաստրային ծածկագրով հողամասի վրա ինքնակամ կառուցված շինությունը օրինական ճանաչելու մասին» թիվ 814-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) վերնագրում, տեքստի 1-ին, 2-րդ պարբերություններում և 1-ին կետում «4/12» թիվը փոխարինել «4/2» թվով:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի 2024 թվականի հունվարի 29-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի 2023 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 814-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» թիվ 98-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1) տեքստում «4/2» թիվը փոխարինել «4/2» թվով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԶԱՎԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

«18» մարտի 2024 թվական
գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ N 305-Ա

«18» մարտի 2024 թվական գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԽՈՒՐԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 2-ՐԴ ՓՈՂՈՑ 13 ՀԱՍՑԵԻ 08-006-0073-0008 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԵՆՔ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Աստղիկ Գառնիկի Մայիլյանը (ծնված 20/04/1951 թվական) դիմել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարին՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ախուրիկ գյուղի, 2-րդ փողոց, 13 հասցեի 0,145156 հեկտար մակերեսով, 08-006-0073-0008 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա գտնվող, ինքնակամ համարվող բնակելի նշանակության շենք շինություններն օրինական ճանաչելու խնդրանքով:

Սեփականության իրավունքով Աստղիկ Գառնիկի Մայիլյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ախուրիկ գյուղի 08-006-0073-0008 կադաստրային ծածկագրով Ախուրիկ գյուղի, 2-րդ փողոց, 13 հասցեի հողամասի վրա գտնվող ինքնակամ կառույց համարվող 173,62 քառակուսի մետր ընդհանուր ներքին մակերեսով բնակելի տունը, անասնաշենքը, ավտոտնակը, հացատունը, ծածկը և օժանդակ շինությունը կառուցվել են 1957-1960 թվականներին (մինչև 2001 թվականի մայիսի 15-ը), իսկ 12.36 քառակուսի մետր ընդհանուր արտաքին մակերեսով բնակելի տունը, շվաքարանը և հարթակը կառուցվել են 2013 թվականին (2001 թվականի մայիսի 15-ից հետո): Ինքնակամ կառույցները կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք: Ինքնակամ կառույցները հաշվառված են Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեում թիվ 2024CAMNTC ծածկագրով:

Ղեկավարվելով քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 6-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հունվարի 5-ի թիվ 14-

Ն որոշման 2-րդ կետի, «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի թիվ 912-Ն որոշման 1-ին և 4-րդ կետերի դրույթներով, համաձայն նույն որոշման կարգի 8-րդ, 10-րդ, 11-րդ կետերի, 13-րդ կետի ա) ենթակետի և 22.1 կետի պահանջների, ինչպես նաև հաշվի առնելով «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածով սահմանված շինության տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցների (Գգ) սահմանված չափը՝ որը Ախուրիկ գյուղի համար (Շիրակի մարզ, 17-րդ գոտի) 0,0743 է, որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ախուրիկ գյուղի 2-րդ փողոց, 13 հասցեի հողամասի վրա գտնվող ինքնակամ կառույց համարվող՝ 1957-1960 թվականներին կառուցված 167,18 քառակուսի մետր ընդհանուր ներքին մակերեսով բնակելի տունը, անասնաշենքը, ավտոտնակը, հացատունը և ծածկը ճանաչել օրինական առանց վճարների գանձման:
2. Նույն հողամասի վրա 2013 թվականին ինքնակամ կառուցված 12,36 քառակուսի մետր ընդհանուր արտաքին մակերեսով բնակելի տունը, շվաքարանը և ծածկը ճանաչել օրինական սահմանված վճարների դիմաց:
3. Սույն որոշման 2-րդ կետով օրինական ճանաչված բնակելի շինությունների յուրաքանչյուր մեկ քառակուսի մետրի օրինականացման համար սահմանել 10000 Հայաստանի Հանրապետության դրամ և կիրառել 0,0743 գործակիցը:
4. Ընդամենը շինությունների օրինականացման համար հաշվարկված վճարը կազմում է 9184 (ինը հազար մեկ հարյուր ութսունչորս) Հայաստանի Հանրապետության դրամ:
5. Սույն որոշման ուժի մեջ մտնելու օրվանից հաշված, 60 օրյա ժամկետում, օրինականացման համար սույն որոշման 4-րդ կետով սահմանված գումարը չվճարելու դեպքում՝ որոշումն համարվում է ուժը կորցրած:
6. Նույն հողամասի վրա 1960 թվականին ինքնակամ կառուցված 6,44 քառակուսի մետր ներքին մակերեսով օժանդակ շինությունը թողնել ինքնակամ, ինքնակամ կառույցի համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված պարտավորությունները և ռիսկերը կրում է հողամասի սեփականատերը:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անշարժ գույքի սեփականատիրոջը պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից.
8. Գույքային իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԶԱՎԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

«18» մարտի 2024 թվական
գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ N 306 -Ա

«18» մարտի 2024 թվական գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԽՈՒՐԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 2-ՐԴ ՓՈՂՈՑ ՏՈՒՆ 15 ՀԱՍՑԵԻ 08-006-0073-0007 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԵՆՔ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Աստղիկ Գառնիկի Մայիլյանը (ծնված 20/04/1951 թվական) դիմել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարին՝ բաժնային սեփականության իրավունքով (հիմք ժառանգության վկայագիր 787-20231225-84-7580226) իրենց ընտանիքին պատկանող Ախուրիկ գյուղի 2-րդ փողոց 15 հասցեի 08-006-0073-0007 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,141176 հեկտար մակերեսով տնամերձ հողամասի վրա առկա, ինքնակամ համարվող բնակելի նշանակության շենք շինություններն օրինական ճանաչելու խնդրանքով:

Բաժնային սեփականության իրավունքով Աստղիկ Գառնիկի Մայիլյանին, Սուսաննա, Ռուզաննա և Գոհար Բագրատի Խանոյաններին պատկանող, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ախուրիկ գյուղի 2-րդ փողոց 15 հասցեի, հողամասի վրա գտնվող, ինքնակամ կառույց համարվող 118,61 քառակուսի մետր ընդհանուր ներքին մակերեսով բնակելի տունը, նկուղը և հարթակը կառուցվել են 1991 թվականին իսկ 21,6 քառակուսի մետր մակերեսով անավարտ հիմքը 1997 թվականին (2001 թվականի մայիսի 15-ից առաջ): Ինքնակամ կառույցները կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք: Ինքնակամ կառույցները հաշվառված են Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեում թիվ 20242MXKLM ծածկագրով:

Ղեկավարվելով Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 6-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հունվարի 5-ի թիվ 14-Ն որոշման 2-րդ

կետի, «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի թիվ 912-Ն որոշման 1-ին և 4-րդ կետերի դրույթներով, համաձայն նույն որոշման կարգի 8-րդ, 10-րդ, 11-րդ կետերի, 13-րդ կետի բ) ենթակետի և 22.1 կետի պահանջների, ինչպես նաև հաշվի առնելով «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածով սահմանված շինության տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցների (Գգ) սահմանված չափը՝ որը Ախուրիկ գյուղի (Շիրակի մարզ, 17-րդ գոտի) համար 0,0743 է, որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ախուրիկ գյուղի 2-րդ փողոց, 15 հասցեի հողամասի վրա 1991 թվականին կառուցված 118,61 քառակուսի մետր ընդհանուր ներքին մակերեսով բնակելի տունը, նկուղը և հարթակը ճանաչել օրինական առանց վճարների գանձման:
2. Նույն հողամասի վրա 1997 թվականին ինքնակամ կառուցված 21,60 քառակուսի մետր արտաքին մակերեսով անավարտ հիմքը ճանաչել օրինական սահմանված վճարների դիմաց:
3. Սույն որոշման 2-րդ կետով օրինական ճանաչված անավարտ հիմքի յուրաքանչյուր մեկ քառակուսի մետրի օրինականացման համար սահմանել 6000 Հայաստանի Հանրապետության դրամ և կիրառել շինության տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության 0,0743 գործակիցը:
4. Ընդամենը շինության օրինականացման համար հաշվարկված վճարը կազմում է 9630 (իննը հազար վեց հարյուր երեսուն) դրամ:
5. Սույն որոշման ուժի մեջ մտնելու օրվանից հաշված, 60 օրյա ժամկետում, օրինականացման համար սույն որոշման 4-րդ կետով սահմանված գումարը չվճարելու դեպքում՝ որոշումն համարվում է ուժը կորցրած:
6. Սահմանված կարգով անշարժ գույքի բաժնային սեփականատերերին տրամադրել կիսակառույցն ավարտին հասցնելու համար ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ անհրաժեշտ նախագծային փաստաթղթերը մշակելու և շինարարությունն ավարտելու համար:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անշարժ գույքի բաժնային սեփականատերերին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
8. Գույքային իրավունքների պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԶԱՎԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

«18» մարտի 2024 թվական
գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ N 307-Ա

«19» մարտի 2024 թվական գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԽՈՒՐՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 08-007-0176-0004 ԵՎ 08-007-0176-0008 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԵՐՈՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ՆՈՐ ԱՌԱՋԱՑՈՂ 0,06167 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, 59-րդ հոդվածի 1-ին մասի, 3-րդ կետի դրույթներով և համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի, դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետի և 39-րդ կետի պահանջների, որոշում եմ՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ախուրյան բնակավայրի տարածքում գտնվող, 08-007-0176-0004 և 08-007-0176-0008 կադաստրային ծածկագրերով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողամասերի սահմաններում նոր առաջացող 0,06167 հեկտար մակերեսով հողամասը հասցեավորել՝ «Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Ախուրյան համայնք, գյուղ Ախուրյան, Վազգեն Ա-ի փողոց, 16 անասնաշենք»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԶԱՎԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

«19» մարտի 2024 թվական
գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ N 308-Ա

«20» մարտի 2024 թվական գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՑԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 13-ՐԴ ՓՈՂՈՑ 2-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ 1 ՀԱՍՑԵԻ 08-065-0010-0009 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՈՒՄԻՑ ԱՌԱՋԱՑՈՂ ՆՈՐ ՕԲՅԵԿՏՆԵՐԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ, 24-րդ կետերի, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով և համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի, դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետի և 33-րդ կետի պահանջների, որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Հացիկ բնակավայրի 13-րդ փողոց, 2-րդ նրբանցք, 1 հասցեում գտնվող, 08-065-0010-0009 կադաստրային ծածկագրով անշարժ գույքի բաժանումից առաջացող հատվածները հասցեավորել հետևյալ կերպ՝
   1) բաժանման սխեմայի 0,157523 հեկտար մակերեսով թիվ 1 հատվածին տրամադրել հետևյալ հասցեն՝ «Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, Ախուրյան համայնք, գյուղ Հացիկ, 13-րդ փողոց, 2-րդ նրբանցք, 5 բնակելի տոն»,
   2) բաժանման սխեմայի 0,001094 հեկտար մակերեսով թիվ 2 հատվածին տրամադրել հետևյալ հասցեն՝ «Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, Ախուրյան համայնք, գյուղ Հացիկ, 13-րդ փողոց, 2-րդ նրբանցք, 5/1 շինություն»,
   3) բաժանման սխեմայի 0,000383 հեկտար մակերեսով թիվ 3 հատվածին տրամադրել հետևյալ հասցեն՝ «Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, Ախուրյան համայնք, գյուղ Հացիկ, 13-րդ փողոց, 2-րդ նրբանցք, 5/2 շինություն»:
2. Գույքի բաժանման սխեման կցվում է սույն որոշմանը՝ համաձայն հավելվածի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Զ.ՄԱՆՈՒԿՅԱՆ

«20» մարտի 2024 թվական
գյուղ Ախուրյան

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Ախուրյան համայնքի ղեկավարի 2024 թվականի
մարտի 20-ի թիվ 308 -Ա որոշման

Սեփականատեր	**ՀՈՂԱՄԱՍԻ ԲԱԺԱՆՄԱՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ**	Շ.Ա 1
	Շիրակ, Ախուրյան համայնք, գ. Հացիկ 13-րդ փողոց 2-րդ նրբանցք 1 բնակելի տուն	Հաստատում եմ ____.____.2024թ.
	Անուն, ազգանուն, հայրանուն	Համայնքի ղեկավար Կ.Տ.
		Հ. Մանուկյան
	Գործարանատերերի հիմքը	Անուն, ազգանուն, հայրանուն



Մակերես հա	
Ծածկագիր	
Նպատակային նշանակություն	
Գործառնական նշանակություն	
Լրացուցիչ նշումներ	

Հողամասի		
Հասցեավորման լրացուցիչ տարր	Կադաստրային տվյալներ	Գծային չափերը (մ)

Մասշտաբ 1:500	
Որակավորում ունեցող անձ	Գրիգոր Ավետիսյան
Որակավորման վկայականի համարը	016
Ստորագրություն	
Իրավաբանական անձի անվանումը	<<Ս ՖՈՐՍԱՏ ՍԹԱՅԼ>> ՍՊԸ
ՀԾՀ	5538206
Ստորագրություն	
անձիս ամսաթիվ: չափագրության / հատակագծի լրացման	Կ.Տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 մարտի 2024 թվական N 309-Ա

Գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՎԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 16-ՐԴ ՓՈՂՈՑ 3 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՃՇՏԵԼՈՒ ԵՎ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶՈՒՄ ՈՒՂՂՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Արևիկ բնակավայրի 16-րդ փողոց, 3 հասցեում գտնվող, քաղաքացի Սոնյա Մելիքի Գրիգորյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասի տեղադիրքը կադաստրային քարտեզում ուղղելու նպատակով, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և Կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի թիվ 698-Ն որոշմամբ հաստատված կարգի 35-րդ կետի 3-րդ, 4-րդ ենթակետերի և 41-րդ կետի դրույթներով, ինչպես նաև հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման թիվ 922541 վկայականը որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Արևիկ բնակավայրի 16-րդ փողոց, 3 հասցեում գտնվող հողամասի սահմանները ճշտել հաստատված չափագրման փաստաթղթերին համապատասխան և կադաստրային քարտեզում կատարել ուղղումներ:

2. ՈՒղղման արդյունքում սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի և 08-020-0411-0001 ու 08-020-0417-0011 կադաստրային ծածկագրերով հողամասերի հետ համադրվող մասերի նպատակային և գործառնական նշանակությունները ուղղել՝ բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Զ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

«20» մարտի 2024 թվական
գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ N 310-Լ

<<21>> մարտի 2024 թվական գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՏՅԱՆԻ ԵՎ ԳՐԱՆՑՄԱՆ ԹԵՐԹԻԿԻ ՁԵՎԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 7-ի N 2-Ն որոշմամբ ընդունված կանոնակարգի 32-րդ կետի 3-րդ ենթակետի, N 4 որոշմամբ հաստատված կանոնադրության 18-րդ կետի 13-րդ ենթակետի դրույթներով, **որոշում եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանում (այսուհետ՝ Համայնքապետարանում) համայնքային տնտեսության տարբեր ոլորտների վերաբերյալ քաղաքացիների հարցերին պատասխանելու նպատակով յուրաքանչյուր ամսվա երկրորդ և չորրորդ ուրբաթ օրերին կազմակերպել քաղաքացիների ընդունելություն:

2. Հաստատել Համայնքապետարանում քաղաքացիների ընդունելության կարգը՝ համաձայն հավելված N 1-ի:

3. Առաջարկել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու անդամներին և հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի առաջին տեղակալին, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի տեղակալին, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին, բաժինների պետերին.

սույն որոշման 2-րդ կետերով հաստատված կարգին համապատասխան կազմակերպել քաղաքացիների ընդունելություն:

4. Հաստատել Համայնքապետարանում քաղաքացիների ընդունելության գրանցման մատյանի ձևը՝ համաձայն հավելված N 2-ի:

6. Հաստատել Համայնքապետարանում քաղաքացիների ընդունելության գրանցման թերթիկի ձևը՝ համաձայն հավելված N 3-ի:

7. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝

1) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանում քաղաքացիների ընդունելությունը կազմակերպել սույն որոշման դրույթներին համապատասխան և անհրաժեշտ հսկողություն իրականացնել քաղաքացիների հանրագրերի, դիմումների ու բողոքների քննարկման և ընթացքի նկատմամբ.

2) ապահովել սույն որոշման տեղադրումը համայնքապետարանի պաշտոնական կայքում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի և բնակավայրերի վարչական շենքերի հանրության համար տեսանելի մասերում:

8. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին:

9. ՈՒԺը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի 2022 թվականի հունիսի 27-ի թիվ 452-Լ որոշումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Զ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

<<21>> մարտի 2024 թվական
Գյուղ Ախուրյան

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի
2024 թվականի մարտի 21-ի N 310-Լ որոշման

ԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ

1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանում /այսուհետ Համայնքապետարան/ քաղաքացիների ընդունելության կազմակերպման ու իրականացման աշխատանքները:

2. Սույն կարգով սահմանված դրույթները պարտադիր են համայնքապետարանի աշխատակազմի և աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների աշխատակիցների համար:

3. Քաղաքացիների ընդունելության գրանցումը կատարվում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի մամուլի քարտուղարի կողմից:

4. Համայնքապետարանում քաղաքացիների ընդունելությունը կատարվում է յուրաքանչյուր ամսվա երկրորդ և չորրորդ ուրբաթ օրերին, ժամը 15^{00}-ին, Համայնքապետարանի նիստերի դահլիճում (հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Ախուրյան համայնք, գյուղ Ախուրյան, Գյումրու խճուղի 42):

5. Ընդունելության համար չեն կարող հերթագրվել այն քաղաքացիները՝

1) ում կողմից բարձրացված հարցն ուղղակիորեն չի առնչվում համայնքապետարանի գործառույթներին և համայնքի ղեկավարի լիազորություններին,

2) ովքեր նույն հարցով նախորդող վեց ամսվա ընթացքում մասնակցել են ընդունելությանը,

3) ում բարձրացրած հարցը տվյալ պահին գտնվում է դատարանի վարույթում կամ առկա է ուժի մեջ մտած դատական ակտ,

4) ում բարձրացրած հարցի վերաբերյալ առկա է դիմումը մերժելու մասին ուժի մեջ մտած վարչական ակտ:

6. Քաղաքացիների ընդունելությունն իրականացնում են՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարը, համայնքի ղեկավարի առաջին տեղակալը, համայնքի ղեկավարի տեղակալը, Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարը, համայնքի ավագանու անդամները, Համայնքապետարանի աշխատակազմի բաժինների պետերը և հարցերի հետ առնչվող մասնագետները:

7. Քաղաքացիների ընդունելությունը կազմակերպվում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի մամուլի քարտուղարի միջոցով:

8. Ընդունելության ժամանակ մեկ քաղաքացու հարցի քննարկման համար նախատեսվում է մինչև 15 րոպե:

9. Յուրաքանչյուր ընդունելությանը կարող է մասնակցել առավելագույնը 12 քաղաքացի:

10. Ընդունելության համար քաղաքացիները գրանցվում և հերթագրվում են էլեկտրոնային հարցումների միասնական www.akhuryan.am հարթակում «Դիմել համայնքապետարան» բաժնում կամ Համայնքապետարանի պաշտոնական ֆեյսբուքյան էջում: Ընդունելության համար քաղաքացիները կարող են գրանցվել և հերթագրվել նաև դիմումի և +37494974272 հեռախոսահամարին ստացված հեռախոսազանգի միջոցով կամ դիմել ՀՀ Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարան, 3-րդ հարկ, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի մամուլի քարտուղարին /հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, Ախուրյան համայնք, գյուղ Ախուրյան, Գյումրու խճուղի, թիվ 42/:

11. Քաղաքացիներն ընդունելությանը ներկայանում են անձը հաստատող փաստաթղթով:

12. Քաղաքացիների ընդունելությանը և հարցերի քննարկմանը անհրաժեշտության դեպքում կարող են մասնակցել համայնքապետարանի աշխատակազմի այլ աշխատակիցներ:

13. Քաղաքացիների ընդունելության ժամանակ նրանց կողմից բարձրացված հարցերին տրվում է սպառիչ պատասխան կամ պարզաբանվում է ընդունելության ընթացքում և արձանագրվում է քաղաքացիների ընդունելության կազմակերպչի կողմից՝ համապատասխան մատյանում:

Առանձին դեպքերում, երբ լրացուցիչ ուսումնասիրության անհրաժեշտություն է առաջանում՝ ձևակերպվում է հանձնարարական, որի հիման վրա քաղաքացուն տրվում է գրավոր պատասխան՝ դիմումների քննարկման համար սահմանված կարգով և ժամկետում:

14. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի մամուլի քարտուղարը՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 5-ը, ամփոփում է քաղաքացիների տվյալ եռամսյակի ընդունելության արդյունքները, նախապատրաստում և աշխատակազմի քարտուղարին է տրամադրում ամփոփ հաշվետվություն: Հաշվետվությունը մամուլի քարտուղարի կողմից տեղադրվում է համայնքապետարանի պաշտոնական կայքէջում:

15. Սույն կարգով սահմանված աշխատանքների կատարման նկատմամբ հսկողությունն իրականացնում է համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

Հավելված N 2
Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի
2024 թվականի մարտի 21-ի N 310-Լ որոշման

ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ
ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ

Հ/հ	Ամսաթիվ	Քաղաքացու ազգանունը, անունը,հայրանունը	Հասցեն	Հեռախոս, կամ էլ. փոստի հասցե	Հարցի բնույթը	Այլ նշումներ

Հավելված N 3
Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի
2024 թվականի մարտի 21-ի N 310-Լ որոշման

ԳՐԱՆՑՄԱՆ ԹԵՐԹԻԿ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ, ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ, ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼԻ, ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ԲԱԺԻՆՆԵՐԻ ՊԵՏԵՐԻ ԵՎ ԱՌԱՆՁԻՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ

«------» ---------- 2024 թվական

Անուն, ազգանուն, հայրանուն ----------

Հասցեն, հեռախոսահամարներ, էլեկտրոնային փոստի հասցեն ----------

---

Աշխատանքի վայրը ----------

Հարցի համառոտ բովանդակությունը ----------
---------- ----------
---------- ----------
---------- ----------

Արդյունքը ----------

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 մարտի 2024 թվականի N 311-Ա

Գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 8-Ի ԹԻՎ 759-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆՆԵՐ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, 3-րդ մասի, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերի, 38-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի 2024 թվականի հունվարի 19-ի թիվ Կ-19012024-08-0057, 2024 թվականի փետրվարի 29-ի թիվ Կ-29022024-08-0218 որոշումները՝ որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի 2023 թվականի դեկտեմբերի 8-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Վահրամաբերդ գյուղի Բյուրակն թաղամաս 9-րդ փողոց թիվ 4 հասցեում գտնվող 0,051666 հեկտար մակերեսով տնամերձ հողամասի և դրա վրա կառուցված բնակելի նշանակության շինությունների նկատմամբ քաղաքացի Մուշեղ Երվանդի Մարգարյանի սեփականության իրավունքը ճանաչելու մասին» թիվ 759-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝
   1) որոշման 1-ին կետում «83,79» թվերը փոխարինել «65,65» թվերով,

2) որոշման 1-ին կետի « ՝ առանց օրինականացման վճարների գանձման» բառերը և կետադրական նշանները հանել:

2. Անվավեր ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի 2024 թվականի հունվարի 15-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի 2023 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 759-Ա որոշման մեջ լրացում կատարելու մասին» թիվ 21-Ա և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի 2024 թվականի հունվարի 25-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի 2023 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 759-Ա որոշման մեջ փոփոխություններ ու լրացում կատարելու և 2024 թվականի հունվարի 15-ի թիվ 21-Ա որոշումն անվավեր ճանաչելու մասին» թիվ 75-Ա որոշումները:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում Մուշեղ Երվանդի Մարգարյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԶԱՎԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

«22» մարտի 2024 թվական
գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄ N 312 – Ա

22 մարտի 2024թվական

գ. Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԽՈՒՐՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ԱՇԽԵՆ ՄԻՍԱԿԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՄԻԱՆՎԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 48 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 26-ի թիվ 61-Ն որոշմամբ սահմանված կարգի 18-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ախուրյան բնակավայրի բնակիչ Աշխեն Կարապետյանի 2024 թվականի մարտի 22-ի դիմումը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարը որոշում եմ՝

Բավարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Ախուրյան գյուղի բնակիչ Աշխեն Միսակի Կարապետյանի խնդրանքը և նրա անչափահաս երեխայի բուժման մեկնելու հանգամանքը դիտարկել որպես առանձնահատուկ դեպք և նրան օգնության կարգով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի 2024 թվականի վարչական բյուջեի 10-րդ բաժնի 7-րդ խմբի 1-ին դասի «Այլ նպաստներ բյուջեի» 4729 հոդվածից տրամադրել 100 000 (մեկ հարյուր հազար) դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Զ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

22 մարտի 2024 թվական
գյուղ Ախուրյան